Ույծ

Բնակչություն՝ 453

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 101 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 5 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ,

Մտնում է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ծղուկ գավառում: Հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի կողմից: Նա Ծղուկ գավառի գյուղերի ցուցակում նշում է Մեծ Ույծ և Փոքր Ույծ: Ըստ Մորուս Հասրաթյանի ներկայիս Ույծը գտնվում է փոքր Ույծի տարածքում: Մեծ Ույծի գտնվելու վայրը դեռևս պարզ չէ: Գյուղը մինչև 1990 թվականը կոչվում էր Ուզ: Ըստ Ե. Լալայանի `գյուղի սկզբնական բնակիչները եկել են Պրսկաստանի Գեարմարի /Թավրիզի մոտ/ մահալի Ուզումչի գյուղից:
Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության 1961թ. նոյեմբերի 11-ի հրամանագրով գյուղը միացվել է շրջկենտրոնին: և 1985թ-ին կրկին տարանջատվել է:
Գյուղի շրջակայքում պահպանվել են Նեոլիթյան դարաշրջանի բերդամրոցի, Կիկլոպյան բերդի, Որոտան և Գիժ գետերի միախառնման հատվածում դեռևս V դարի երկթռիչք կամրջի ավերված հետքերը: Գյուղում պահպանվել է նաև սբ. Հովհաննես եկեղեցին՝ կառուցված 1909թ-ին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 188 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 339գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 670 գլուխ,
- խոզեր՝ 70 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 168:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 510հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3262 հա, այդ թվում՝
• Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2573 հա, որից՝
- վարելահող՝ 1151 հա, բազմամյա տնկարկ՝ 12 հա, արոտ՝ 641 հա, այլ հողատեսք՝ 769 հա
• բնակավայրերի հողեր՝ 136 հա,
• արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 24 հա
• էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝6 հա
• հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 27 հա,
• հատուկ նշանակության հողեր՝ 49 հա,
• անտառային հողեր՝ 418 հա, որից անտառածածկ՝ 43 հա
• ջրային հողեր՝ 29 հա